

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՄԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆՑՈՒ «ՋԱՄԲՈ» ԵՐԿԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

1. Միմեոն Կաթողիկոս Երևանցին (կթդ. 1763-1780 թթ.) Հայ Առաքելական Եկեղեցու, ընդամին մեր ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքի երևելի դեմքերից է: Ամենայն Հայոց Հայրապետը 18-րդ դարի 60-70-ական թվականների թերևս ամենաազդեցիկ և դիվանագետ գործիչներից է եղել: Նրա գահակալության տարիներին (1763-1780 թթ.) ևս մեր իրականության մեջ տեղի են ունենում առաջնության որոշակի քայլեր, որոնցում առանձնակի կարևորություն են ստացել ազգասեր գործչի անդուլ ջանքերը:

ա) Պետականություն չունեցող մի ժողովրդի ամենօրյա ցավն ու մտահոգությունն իր վրա էր առել Հայոց Եկեղեցին՝ ի դեմս Ս. Էջմիածնի: Ժամանակի տիրող պայմաններում պատկերացնել է պետք, թե ինչպիսին կարող էր լինել հայ հոգևորականի, առավել ևս նրա առաջնորդի վիճակը, ում ուսերին ծանրացած էր և պատասխանատվությունը իր հովված հոտի հանդեպ:

Երբ ուշադիր ընթերցում ենք «Ջամբո»-ը, տեսնում ենք, որ նրանում արտացոլվել է և ժամանակի պատկերը: Դա առավել ևս տեսանելի է գրքի այն բաժիններում, որտեղ խոսվում է հարկատվության, սեփականատիրական իրավունքի մասին, երբ ամեն մի միջադեպի առիթով հարուցվում է դատական վեճ («հայց»): Հարկային, դատական և սեփականատիրական քաղաքականությունը և վերջինիս իրագործումը ոչ միայն կայուն չէին, այլև տարփոխվում էին գրեթե ամեն մի գավառից գավառ, գյուղից գյուղ, անհատից անհատ՝ կախված ժամանակի, իրավիճակի, ներդրված եռանդի և այլ միջոցների ինչպիսին լինելուց:

Եվ Հայոց Հայրապետը ոչ միայն ջանք չի խնայել նման հարցերում ճիշտ լուծումներ գտնելու առումով, այլև իր ողջ եռանդը նպատակամղել է կենտրոնախույս ուժերին քարոզելու ազգաշահ գործերով և հավատընծա վարքով ապրելու, ավելի իրական և օգտակար ձեռնարկումների դիմելու:

գ) Եվ հայ ժողովրդի հատկապես սոցիալական, իրավական, մանավանդ հոգևոր կյանքի նման արտացոլման տեսակետից մի վավերական ու գրեթե անփոխարինելի աղբյուր է «Ջամբո» աշխատությունը: Նրանում հեղինակն օգտագործել է անցյալի հայ մատենագիրների (հատկապես Ագաթանգեղոսի, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի, Առաքել Դավրիժեցու, Ջաքարիա Քանաքեռցու, Աբրահամ Կրետացու և ուրիշների) հաղորդած բազմապիսի տվյալները, Սուրբ Էջմիածնում ըստ հնարավորին պահպանված դիվանական փաստաթղթերը՝ կոնդակները, թղթերը, նամակները (ուղարկված և ստացված), ինչպես նաև պարսից, օսմանցի տիրակալների և նրանց տարբեր կարգի ներկայացուցիչների (խաների, դիվանի քարտուղարների, շեխիսլամների, դատական մարմինների և այլնի) հրովարտականները, հրամանները, հրահանգներն ու նման այլ գրությունները: Միմեոն Կաթողիկոս Երևան-

ցին դրանց անդրադառնում է ամենայն մանրամասնությամբ, և ինչպես գրքում է նշվում, դրանք բերվում են առանձին-առանձին, մեկ առ մեկ, անուն առ անուն, ընդ որում գրության ժամանակի, պահպանման տեղի («մատյանի») և այլ հանգամանքների հատուկ, մասնավոր նշումներով:

2. Սույն աշխատությունը բազմաբովանդակ և լայն ընդգրկում ունեցող երևույթ է հայ ոչ վաղ անցյալի գրավոր մշակույթի անդաստանում:

Սիմեոն Կաթողիկոս Երևանցու գրական ժառանգությունը, ինչպես գիտենք, մինչև այժմ չի եղել գիտական առանձին ուսումնասիրության առարկա: Նշանավոր հոգևորականի, Հայ Եկեղեցու Տոնացույցը կարգավորողի, բանաստեղծի, իմաստասեր վերլուծողի և հայ առաքելական հավատքի համար անդուլ և մշտատև պայքարողի տպագրված, ինչպես նաև ձեռագիր մնացած գրքերն ու ժողովածուները, կարծում ենք, այսօր առավել ևս ուսանելի են, մեր օրերի հոգևոր մաքրության և ամրակայման համար արժանի լուրջ վերլուծության և գնահատության, ըստ այդմ փորձառության¹:

ա) Նկատենք, որ «Ջամբո» աշխատությունը «գրավոր հիշատակարան, հայելի և ժողովածու» է ոչ միայն Ս. Էջմիածնի և նրան հարակից վանքերի բուռն հանգամանքների («որպիսությունների»), օտար տիրողների հետ ունեցած տարբեր կարգի գրավոր և պաշտոնական առնչությունների վերաբերյալ, այլև ժամանակի գրաբարի բավականին յուրօրինակ աղբյուր: Այս երկի լեզուն առհասարակ ներկայացնում է մի այնպիսի վիճակ, որը 18-րդ դարի երկրորդ կեսին գործառնում էր արևելահայ իրականության մեջ, հատկապես մտավորականության շրջանում: Նրանում տեղ էին գտնում թե՛ վաղ անցյալից եկող գրավոր լեզվի ավանդույթը, թե՛ նոր ժամանակի լեզվի ակնհայտ առանձնահատկությունները՝ կապված գրական աշխարհաբարից, վերջինիս խոսակցական տարբերակներից, ինչպես նաև օտար լեզուներից առնվող ինչ-ինչ երևույթների գործադրման հետ²:

Այս տեսակետից «Ջամբո» աշխատությունն ունի ոչ միայն բովանդակային, այլև լեզվական անգնահատելի արժանիքներ, առանձին ուշադրության առարկա հանդիսանալուն պատշաճող իրողություններ: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ ստորև անդրադառնալու ենք «Ջամբո» երկի լեզվի բառապաշարին, ընդ որում վերջինիս այն առանձնահատկություններին, որոնք վերաբերում են բառային նորակազմությանը և բառերի նոր իմաստային կիրառությանը: Մեր մոտավոր հաշվումներով այս գրքում գործածված ենք գտնում երեք հարյուրից ավելի նորակազմ բառեր, որոնք չեն հանդիպում, օրինակ, «Նոր հայկազյան բառարանում»³:

բ) Գիտական և կազմակերպչական փայլուն ընդունակությունների, դիվա-

¹ Ձեռագիր աշխատանքներից խիստ ուշագրավ են մի քանի տասնյակից անցնող «Քարոզները», որոնք ինքնագիր են՝ գրված գեղեցիկ, սակայն բավականին դժվար ընթեռնելի ձևով, և որոնց մեծագույն մասը տողերիս հեղինակը ժամանակին (7-8 տարի առաջ) վերծանել և պատրաստել է նոր գրական հայերեն թարգմանության՝ ի պահ թողնելով Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի տնօրինությանը:

² Լեզվական այդ վիճակի մասին ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երևան, 1990:

³ Գրքում տեղ գտած բազմաթիվ և միմյանցից խստորեն տարբերվող փոխառյալ բառերին, հատկապես տերմիններին և տերմինային անվանումներին անդրադառնալու ենք առանձին, մեկ այլ առիթով:

նագիտական մեծ խոհեմության տեր և իր ազգի գոյատևման և առաջընթացի հարցում ճիշտ կողմնորոշում ունեցած Հայրապետի սույն աշխատությունն առաջին անգամ լույս է տեսնում ձեռագրից մեկ հարյուրամյակ հետո, Էջմիածնի տպարանում⁴։ Նշենք նաև, որ այն համեմատաբար ուշ թարգմանվում է ռուսերեն (թարգմ. Ստ. Մալխասյանց) և տպագրվում Մոսկվայում⁵։ Ավելացնենք, որ տարիներ առաջ մենք ձեռնամուխ ենք եղել կարևորագույն այդ երկի նոր գրական հայերեն թարգմանության գործին, որն էլ տպագրված է մեր ընդարձակ առաջաբանով, մանրամասն լեզվական, բնագրագիտական և այլ կարգի ծանոթագրություններով, հարակից՝ տարբեր բնույթի ցանկերով հանդերձ⁶։

«Ջամբռ» գիրքն ուշագրավ է նաև տերմինների գործածության հետ կապված առանձնահատկությունների տեսակետից։ Նկատենք, որ Սիմեոն Կաթողիկոս Երևանցին իր այս աշխատությունն առհասարակ գրել է ավելի պարզ լեզվով՝ ժամանակի գրաբար հայերենով։ Նրանում տեղ են գտել ոչ միայն ժամանակի խոսակցական, գրական աշխարհաբարին առավել բնորոշ բառեր, ձևեր ու ոճեր, այլև օտար լեզուներից (հատկապես արաբերենից, պարսկերենից, թուրքերենից) բանավոր կամ գրավոր ճանապարհով կատարված փոխառություններ, բառային ընդօրինակումներ (պատճենումներ) և այլն։ Նման ներթափանցումները ժամանակի առումով թերևս բնական են և կարող են դիտվել իբրև այս կամ այն կարգի օրինաչափության դրսևորում։ Դրանից բացի, գրքում կան լեզվական այնպիսի իրողություններ, որոնք կազմում են հեղինակի խոսքի, թերևս նաև ոճի առանձնահատկությունները։ Վերջիններս վերաբերում են հատկապես բառային նորաբանություններին, ինչպես նաև լեզվական այս կամ այն կարգի ներթափանցման արդյունք հանդիսացող երևույթներին։

զ) Գիրքը մեծ կարևորություն ունի ժամանակի (որոշ չափով նաև վաղ անցյալի) պետական, եկեղեցական, տնտեսական և իրավական ոլորտներին բնորոշ տերմինների և տերմինային անվանումների, ինչպես նաև հնից եկող կամ նոր ժամանակներում, առանձնահատուկ պայմաններում ստեղծված հատկանունների (անձնանունների, տեղանունների և այլն) լայն գործածության տեսակետից։ Հատուկ նշելու հարկ կա, որ դրանք կազմում են «Ջամբռ» աշխատության լեզվի մի ուրույն մասը, այդ իմաստով թերևս առավել հետաքրքրական շերտը։ Ուստի կարծում ենք, որ նման բառային միավորներն անշրջանցելի իրողություններ են ոչ միայն առհասարակ, այլև հատկապես բնագիրը նոր գրական հայերենով հասկանալու, նաև գործածելու առումով։

Նկատի ունենալով վերը նշված հանգամանքները, ինչպես նաև այն, որ այդ արժեքավոր աշխատությունն այսօր ևս չի կորցրել իր բովանդակային կարևորությունը

⁴ Ջամբռ գիրքը որ կոչի յիշատակարան արձանագուցիչ հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ և շարագրեցեալ ի Սիմէօն ցաւահար և վշտակոծ Կաթողիկոսէ Երևանցոյ, ի Վաղարշապատ, 1875։

⁵ **Симеон Ереванци**, Джамбр. Памятная книга, зеркало и сборник всех обстоятельств Святого Престола Эчмиадзина и окрестных монастырей. Издательство Восточной Литературы, Москва, 1958.

⁶ **Սիմեոն Կաթողիկոս Երևանցի**, Ջամբռ, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ. Մ. Բաղայանի, Երևան, 2003։

նը՝ գրքի նոր գրական հայերեն թարգմանությանն անհրաժեշտաբար կցել ենք ոչ միայն այլ կարգի, այլև բառապաշարի նորաբանություններին՝ ամենատարածված նոր բառերին և որոշ բառերի նոր իմաստային կիրառություններին վերաբերող ծանոթագրություններ: Գրեթե նույնպիսի նպատակով կազմել ենք նաև անձնանունների, տեղանունների և տերմինների ու տերմինային անվանումների ցանկեր⁷: Վերջիններս անհրաժեշտ են գրաբարից (և ոչ միայն գրաբարից) թարգմանվող գրեթե ամեն մի գործի դեպքում, իսկ «Զամբո» գրքի պարագայում՝ առավել ևս, որովհետև այս դեպքում առնչվում ենք մի ծավալուն, բովանդակությամբ բազմազան, իսկ լեզվի տեսակետից՝ բազմաշերտ աշխատության հետ:

3. Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Զամբո» երկի լեզուն ներկայանում է բառապաշարի այնպիսի առանձնահատկություններով, որոնք կարևոր են հայոց լեզվի պատմության, մասնավորապես հայերենի գիտական տերմինաբանության և հայոց լեզվի պատմական բառագիտության տեսանկյունից: Այդ առանձնահատկություններն ամենից առաջ հանդես են գալիս բառային նորաբանությունների մեջ, ընդ որում ուշադրության են արժանի թե՛ սովորական բառերը և թե՛ տերմիններն ու տերմինային անվանումները, ինչպես նաև բառերի նոր, ընդ որում տերմինային իմաստով կիրառությունները: Օրինակ՝ գրքում բազմիցս գործածվում է **այգի** բառը, որն այստեղ ոչ միայն որոշակի տերմին է, այլև հանդես է բերում իմաստային առանձնահատկություն, այն է՝ գործածվում է «խաղողի այգի» իմաստով⁸:

Նկատենք նաև, որ առհասարակ նոր բառերը հեղինակի բառապաշարը հարստացնում են և՛ քանակով, և՛ որակով (իմաստային կողմով), իսկ նոր իմաստային կիրառությունները՝ միայն որակով: «Զամբո» երկում ևս բավականին շատ են սովորական բառերի նոր իմաստային կիրառությունները:

ա) Նման նորաբանությունների առանձնացումը և հատուկ քննության առարկա դարձնելն ունեն այն կարևորությունը, որ դրանք հիմք են ստեղծում հետագայում ավելի ամբողջական բառարանների կազմության համար: Այս առումով նշենք, որ մինչև այժմ չունենք հայերենի բառապաշարի ժամանակագրական հստակ առանձնացում, այսինքն՝ դար առ դար որոշել, թե լեզվի բառապաշարի մեջ ինչպիսի և ինչ բառեր ու նման կարգի միավորներ են ներմուծվել: Այնուհետև հայերեն գրավոր շատ հուշարձաններ դեռևս չեն դարձել բառարանագրման աղբյուր, ընդ որում լիում են նաև գրական հուշարձանի ոչ լիովին օգտագործման դեպքեր⁹: Ուստի կարծում ենք, որ միակ ճանապարհն այն է, որ բառային նորաբանությունների առանձնացման դեպքում մի կողմից պետք է առաջնորդվել հայերենի համեմատաբար ընդարձակ տվյալների օգտագործմամբ, իսկ մյուս կողմից՝ հիմք ստեղծել նոր բառարանների մեջ նման նորաբանությունների ընդգրկման համար:

⁷ Տե՛ս Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Զամբո, էջ 409-449, այլև 545-604:

⁸ Նույն տեղում, էջ 411:

⁹ Նման բացթողում նկատելի է ոչ միայն գրաբարի, այլև արդի հայերենի բառապաշարի բառարանագրման դեպքում, երբ այս կամ այն հեղինակի երկի բառապաշարի շատ միավորներ դուրս են մնում: Օրինակ՝ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (հհ. 1-4, Երևան, 1969-1980) չենք գտնում Ակսել Բակունցի երկերում գործածված մի քանի տասնյակից ավելի բառեր, երբեմն դրանց մի մասը նշվում է հետագա հեղինակների վկայակոչումով:

Նկատի ունենալով այս հանգամանքները՝ «Ջամբո» երկում հանդիպող բառային նորաբանությունները պայմանականորեն, հարաբերական իմաստով ենք դիտում որպես այդպիսին, քանի որ չենք գտնում հայերենի (հատկապես գրաբարի) ամենաընդարձակ բառարանում¹⁰: Մյուս կողմից՝ չենք կարող դրանք անտեսել, որովհետև նման առանձնացմամբ և քննությամբ բացահայտվում է հայոց լեզվի բառապաշարի պատմությունը:

բ) Բառային նորաբանություններն, ինչ խոսք, կարելի է խմբավորել՝ նկատի ունենալով դրանց սովորական կամ տերմինային իմաստով գործածելի, նախկինում հայտնի բառերի՝ իբրև բառակազմական հիմքի օգտագործմամբ նոր բառեր և բառաձևեր կազմելը, օտար բառ-բաղադրիչների գործածությունը հայերենի այս կամ այն բառի կամ տերմինի բաղադրության դեպքում և այլն:

Այսպես, «Ջամբոի» հեղինակը գործածում է **վճռահատություն**՝ «վճիռ կայացնելը» նոր բառը, որը չենք գտնում «Նոր հայկազյան բառարանում»: Իսկ **անթաքուցանել**՝ «անթաքույց լինել, չթաքցնել, բացահայտ ձևով երևալ» բառը թեև չենք գտնում հիշյալ բառարանում, սակայն վերջինս ունի **անթագուստ, անթաքոյց**, նաև **անթաքչելի** բառերը, որոնց էլ այժմ ավելանում է **անթաքուցանել** բայը: Այնուհետև, «Նոր հայկազյան բառարանում» չենք հանդիպում **ճարտարալեզու**՝ «լեզվով ճարտար, հմուտ ձևով խոսող» բառը, թեև բառարանն ունի **ճարտարալեզուություն, ճարտարալեզուի** տարբերակները: Բաղադրական հիմքի՝ **ճարտարալեզու** բառի չգոյությունը «Նոր հայկազյան բառարանում» չի նշանակում, թե այդ բառն առհասարակ նախկինում չի եղել կամ կիրառվել, հակառակ դեպքում կարող ենք ենթադրել, որ գործ ունենք, այսպես կոչված, բացթողումային (էլիպտիկ) բառակազմության հետ¹¹:

Բերված օրինակները, ինչպես նաև մյուս կարգի նորաբանությունները ցույց են տալիս, որ Սիմեոն Կաթողիկոս Երևանցին իր երկի շարադրանքի բերումով կազմել է նոր բառեր՝ ելնելով հիմքում ընկած երևույթի հայերենի միջոցներով անվանելու, օտարլեզվյան, հայերենին այս կամ այն չափով խորթ ձևերի թարգմանության կամ պատճենման անհրաժեշտությունից, ինչպես նաև շատ դեպքերում նախկինում հայտնի հայերեն այս կամ այն բառը գործածել է բոլորովին նոր իմաստով՝ ի համապատասխանություն օտար համարժեքի կամ ընդհանուր հասկացության նոր հատկանիշի:

գ) «Ջամբո» աշխատության մեջ, բնականաբար, շատ են գործածվում սովորական նորաբանությունները, որոնք աչքի են ընկնում հայերենի բառակազմության ընդհանուր օրինաչափություններով, երբեմն ունենում են այս կամ այն կարգի առանձնահատկություններ, որոնք առհասարակ այլ բան չեն, քան տարբերություններ բառակազմական ընդհանուր օրինաչափություններից:

4. Բառային նորաբանությունները հիմնականում երևան են գալիս երկու ճանապարհով՝ բառաբարդմամբ և բառածանցմամբ, ընդ որում համեմատաբար մեծ թիվ

¹⁰ Հմմտ. Գ. Աւետիքեան, Խ. Միրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837: Տե՛ս նաև Առձեռն բառարան հայկազեան լեզուի, II տպագրություն, Վենետիկ, 1865:

¹¹ Հմմտ. Զ. А. Халифман, Т. С. Макеева, О. В. Раевская, Словообразование в современном французском языке, М., 1983.

են կազմում բարդ բառերը՝ անկախ սովորական կամ տերմինային իմաստով գործածվելու հանգամանքից: Միաժամանակ հարկ կա նշելու, որ նորակազմ բառերը բաղադրական հիմքերի բնույթի տեսակետից համեմատաբար նոր են, այսինքն՝ ունեն որոշ չափով աշխարհաբարի բառակազմությանը բնորոշ գծեր, քան որ կարելի էր սպասել գրաբարից եկող առանձնահատկությունների գործադրման դեպքում: «Զամբո» աշխատությունը, գրված լինելով բավականին նոր ժամանակներում, բառային նորաբանությունների մեջ նաև հանդես է բերում գրաբարից զգալապես հեռացած լեզվական մտածողություն:

1) Բարդ բառերը բաղադրված են շուրջ երկու տասնյակ կաղապարով, որոնք ավելի մանրամասն քննելու դեպքում կարող են ավելի մասնավոր խմբեր ներկայացնել՝ կապված հատկապես բաղադրական հիմքերի որոշակի առանձնահատկությունների հետ (հնչյունափոխված կամ անհնչյունափոխ հիմքեր, բաղադրական հիմքերից մեկի կամ մյուսի նորակազմություն լինելը և այլն):

ա) Գոյական - գոյական կաղապարով բարդություններն անհամեմատ մեծ թիվ են կազմում, իրենց հերթին կարող են բաժանվել առնվազն երկու խմբի, եթե նկատի ենք առնում հատկապես բաղադրվող հիմքի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ տարբերակով հանդես գալու հանգամանքը:

Անհնչյունափոխ բաղադրվող հիմքով գոյական - գոյական տիպի բաղադրությամբ գոյականներն, իրենց հերթին, որոշակի խումբ կազմելուց բացի ունեն լայն գործածություն, ներկայացնում են այդ կաղապարի մեջ մտնող բառերի ընդհանուր քանակի երկու երրորդը: Օրինակ՝ Գոեալ եղեւ **արձանաքար** մի, յորում գրեալ էր վերոյ գրեցեալ Գրիգոր Մագիստրոսն (էջ 276): Առեալ են ի չորից կողմանց ի գեղէն մերմէ գտեղիս, գորս և արարեալ են **գոմատեղիս, ձիատեղիս** և զայլս անասնատեղիս (էջ 202): Ի **դիւանատունն** նոցա և ցուցանէ զգեղս զայլ գոլ ի բնէ անտի Սրբոյ Աթոռոյս (էջ 105) և այլն:

Ըստ այսմ ունենք նաև հետևյալ բարդ բառերը. **առուատեղ** (էջ 200), **արդիւնատեղի** (էջ 101), **բարեւագրեանք** (**բարեւագիր**, էջ 185), **գեղատեղ** (էջ 195), **դարմանատուն** (էջ 203-204), **գորեղամիտ** (էջ 141), **ծոցամէջ** (էջ 160), **կոնդակաձև** (էջ 101), **հիմնատեղի** (էջ 199), **հրացանատեղի** (էջ 203), **ձիատուն** (էջ 203), **ճառակերպ** (էջ 34), **ճարտարալեզու** (էջ 28), **ջրաղացատեղ** (էջ 189), **սառնատուն** (էջ 181), **սիւնագլուխ** (էջ 23), **վտանգաշատ** (էջ 2), **տենտահող** (էջ 292), **տօթաշատ** (էջ 197), **ուղտատուն** (էջ 203), **փառապերճ** (էջ 26) և այլն:

Հնչյունափոխված հիմքով գոյական - գոյական տիպի բաղադրությամբ գոյականներն առանձնապես աչքի չեն ընկնում հնչյունափոխության որևէ նոր առանձնահատկությամբ, այլ պարունակում են հայերենին առհասարակ բնորոշ փոփոխություններով, որոնցից են, օրինակ, բառավերջի կամ բառի վերջնավանկի որևէ ձայնավորի սղումը կամ անկումը, արմատի ձայնավորի փոփոխումը և այլն: Օրինակ՝ Եւ նոյն փաշայն գրեցուցանէ ի դատարանի իւրում գերկար **գրքաձև** դէֆթեր մի (էջ 134): Քանզի յառաջ լուսաւորչադաւան հայք էին Լեւոն մերայինքն եւ ի սրբոյ Աթոռոյս Էջմիածնէ նուիրակ գնայր անդր (էջ 23): Ցուցանելով և զաւուր ձայնն, զամսաթինն, զլուսնաթինն և զայլս այսպիսիս (էջ 43) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ բարդ բառերը. **աղանամիտ** (էջ 85), **անասնա-**

խարճ (էջ 130), **անասնատեղի** (էջ 202), **առաքելաշաւիղ** (էջ 98), **իշատուն** (էջ 203), **նախրատուն** (էջ 203), **սիրախառն** (էջ 79), **վիմաքար** (էջ 26), **տնախարճ** (էջ 130), **ցրտաշատ** (էջ 197) և այլն:

Ունենք նաև խոսքիմասային նույնպիսի բաղադրիչներով կազմված մեկ-երկու բարդ բառեր, որոնք միացած չեն որևէ հոդակապով՝ ի տարբերություն վերը բերված կազմությունների: Օրինակ՝ *Որովհետև չունէի զկարօղութիւն և չկարացայ իսկ ինձէն յատկապէս զարդիւնաւոր գործ ինչ յառաջացուցանել, զայս գտի ինձ **բանէտղ** (էջ 3): Լիապէս երևին բոլոր որպիսութիւնք փոփոխմանց ...**փորձառիթ** բերմանց և նորին հնարիցն (էջ 1)* և այլն:

բ) Գոյական - բայարմատ կաղապարով բաղադրություններ ևս բավականին շատ են, թեև ոչ այնքան շատ, քան նախորդ խմբի բառերը: Դրանք նույնպէս կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով կազմություններ: Ընդ որում անհնչյունափոխ հիմքերով կազմություններն ավելի շատ են, քան մյուսները:

Անհնչյունափոխ բաղադրվող հիմքերով գոյական - բայարմատ կազմություններն, անշուշտ, նոր են և կրում են համապատասխան լեզվամտածողության կնիքը, թեև գործածվելիս են եղել գրաբարյան բնագրում: Օրինակ՝ Ղապալայ մի ևս հայերեն, գոր **զգտակակար** Աւետիքի որդիքն տան Աղեքսանդր Կաթողիկոսին Ջուղայեցոյ (էջ 254): Զի **զթոյնացոյցն** լոթրանաց խոտիցեն և զիւր Տօնացոյցն ի գործ ածիցեն (էջ 44): Քանզի որ **հայկածին** է և հաւատացեալ Քրիստոսի, սովաւ և ի ձեռն սորա ունի զհաւատն զայն (էջ 51) և այլն:

Ըստ այսմ ունենք նաև հետևյալ բարդ բառերը. **բամբակահան** (էջ 191), **խոտատու** (էջ 160), **հայաստանաբնակ** (էջ 54), **հայրապետանիստ** (էջ 33), **հաւատակորոյս** (էջ 70), **հիմնահաստատ** (էջ 54), **ճարակտուր** (լինիմ, էջ 70), **նախանձակտուր** (էջ 209), **շնորհաբուղիս** (էջ 64), **շնորհածին** (էջ 44, նաև 6), **պրտուպատ** (էջ 159), **վայրանիստ** (էջ 159), **վնասատու** (էջ 58), **տօնակատար** (էջ 29), **քրիստոսակերտ** (էջ 6) և այլն:

Հնչյունափոխված հիմքով գոյական - բայարմատ տիպի բաղադրություններում հնչյունափոխական երևույթներն հնչյունի սղում, փոփոխում, անկում և այլն, առհասարակ նորություն չեն: Օրինակ՝ Որպէս ասացաք, սակայն **էջմիածնանիստ** կաթողիկոսն յառաջ և յետոյ և մինչև ցարդ՝ շնորհօքն Աստուծոյ և նախապատիւ (էջ 54): Ո՛հ, աւա՛ղ գրչիս աստանօր, զի յիրաւի նմանիմք աւերեցեալ և մերկացեալ **ընչակորոյս** վաճառականի (էջ 271) և այլն:

Ունենք նաև հետևյալ բարդ բառերը. **անասնապահ** (էջ 158), **գեղեցկավայել** (էջ 199), **դիմակալ** (էջ 3), **յունաբնակ** (էջ 54), **յունաստանաբնակ** (էջ 54), **պարսպապատ** (էջ 204), **վճռահատ** (էջ 218), **վճռատու** (էջ 33), **վնեժաբնակ** (էջ 43) և այլն:

Հանդիպում են որոշ բարդ բառեր, որոնց գոյական և բայարմատ բաղադրիչները միացած են առանց հոդակապի: Օրինակ՝ Ջրաղացքն **ի գետառումն** են (էջ 187): Որ էր այր չար, ագահ, երկրաւեր (էջ 156) և այլն: Այդպիսին են նաև հետևյալները. **նախրաբաժ** (էջ 158), **քարտաշ** (էջ 182), **օգտարար** (էջ 236) և այլն:

գ) Ի տարբերություն նախորդ խմբի՝ գործածվում են այնպիսի կազմությամբ բարդ բառեր, որոնց երկրորդ՝ բաղադրող հիմքը որևէ բայածն է, այսինքն՝ արդ-

յունքում ունենք դերբայ կամ դիմավոր բայ: Օրինակ՝ Այս Միքայելս նախապես ճմլեաց զկզակս Ադուանից և Աղթամարու կաթողիկոսացն, որք կամէին **նտնածել** յԱթոռս Սուրբ Էջմիածին (էջ 20): Զի մի **նտնածեալ** ձեռն արկիցեն ի հողս մեր... (էջ 198-199): Ուստի տաճիկքն այնք եթէ **տեղակալեալ էին** անդ (էջ 162): Այսպէս ունենք նաև հետևյալ բառերը. **առականաբացող** (էջ 58), **փորձառող** (էջ 2) և այլն:

դ) Առանձին խումբ են կազմում այն բարդ բառերը, որոնք բաղադրված են **ի - ա > ե** հնչյունափոխության արդյունքում, այսինքն՝ բաղադրվող հիմքը վեջանում է **ի** ձայնավորով, որը **ա** հոգակապի հետ հանդիպադրվելիս վերածվում է **ե** բաղադրիչի (հմմտ. **գինի - ա - տուն > գինետուն**): Ունենք հետևյալ բարդ բառերը. Տեղիս այս լեալ է յառաջագոյն տուն և **այգեկերպ** մեծ բաղչայ ումեմն ձորագեղցոյ Բայրնդուր կոչեցելոյ Համազասպեան (էջ 204): Ապա և **զայգեչափ** տեղի մի ևս ի յարևելաեան կուսէ ի ներս էարկ (էջ 36): Վերոյիշեցեալ **այգետեղիքդ** ամենայն են մեր Մանկասարենց այգոյ և Երևանու ճանապարհի և սուրբ Հովսիսիմէի միջոցքն (էջ 171): Վասն որոյ ունի և ձեռք մի տունս յատուկ պարսպով, **ներքնատամբ, վերնատամբ, գինետամբ, ձիատամբ, դարմանատամբ**, և այլովք հարկաւորօք (էջ 203-204): Էառ ի տեղի հոգեբաժնի՝ և արար Սրբոյ Աթոռոյս (էջ 167) և այլն: Թերևս հարկ կա նշելու, թե բերվածներից նախավերջին օրինակում, ի միջի այլոց, **տուն** բաղադրվող հիմքով (բնագրում գործածված եզակի թվի գործիական հոլովով՝ գրաբարի համակարգի մեջ), որքան նոր բառեր են կերտվում համաբանության հիման վրա (հմմտ. **ներքնատուն, վերնատուն, գինետուն, ձիատուն և դարմանատուն**)¹²:

ե) Հանդիպում է մեկ-երկու բարդ բառ՝ բաղադրված գոյական - ածական բաղադրիչներով: Օրինակ՝ «...և այլս հարկաւորս նիւթս և ի **խորհրդալի** բնաբանս» (էջ 34): Դարձեալ երկու հայերէն դապալայի վասն երկու տախտակ այգոյ, և մէկ **կառասալի** շիրախանայի (էջ 260): Այսպէս նաև **իմաստնաշատ** (էջ 87) բառը և այլն:

զ) «Ջամբո» գրքի հեղինակի կերտած նոր բառերի մեջ առանձին խումբ են ներկայացնում այն բառերը, որոնք բաղադրված են ածական բաղադրվող հիմքով և գոյական, մակբայ կամ ածական բաղադրող հիմքով՝ անկախ բաղադրիչների հոդակապով կամ առանց հոդակապի միացության հանգամանքից: Օրինակ՝ Եւ կամ թէ այլ է Յուդայ Յակոբեան, և այլ սոյն Թադէոս, բնաւքն սուտք են, և **ի թիւրամտաց** ներմուծեալ յանհոգութենէ և ի զանցառութենէ նախնեաց երանելեացն մերոց թոյլատրեցեալք (էջ 11): Այլ և էր սա բարուքն հեզ, պարզամիտ և համբերօղ, ներող և անյիշաչար, **կակդասիրտ** և գթաշատ (էջ 34): Որ է հանդէպ բերթին Երևանու ի հիւսիսակոյսն, ի բարձրահայեաց գագաթանն **մեծախոր** ձորոյն (էջ 204) և այլն:

Ըստ այսմ ունենք նաև հետևյալ բարդ բառերը. **թուլահաւատ** (էջ 70), **խղճաբարոյ** (էջ 85), **մշտապիտոյ** (էջ 4), **շատազգ** (էջ 277), **սեւագլուխ** (էջ 24) և այլն:

է) Ածական - բայարմատ կաղապարով բաղադրությունները նույնպես զգալի թիվ են կազմում՝ բաղադրված հիմքերից առաջինի անհնչյունափոխ կամ հնչյունափոխված տարբերակների գործադրումով: Օրինակ՝ Սա շինեաց զՏաճարն Շողակաթ կոչեցելոյ ի հիմանէ **գեղեցկաշար** վիօք ընդ զանգակատանն և ընդ ամենայն

¹² Ավելորդ չենք համարում նշելու, որ հայերենի բառակազմությանը նվիրված աշխատանքներում չենք հանդիպում նման կազմությամբ, այսինքն՝ բնագրային համաբանության (անալոգիայի) սկզբունքով երևան եկող բառերի ուսումնասիրության:

շինուածոյ նորին (էջ 26): Եւ Աբրահամ Կաթողիկոսն ևս էր ահարկու և **շքեղատես**, մեծանձն և խելօք, ճարտարալեզու և հանճարեղ (էջ 30): Սա էր այր ճարտարաբան և **ճոռմախօս**, յաջողակ և ահաւոր, յորմէ ամենեքեան երկնչէին (էջ 25) և այլն:

Ըստ այսմ ունենք նաև հետևյալ բարդ բառերը. **հաւասարաբարձ** (էջ 60), **ձախորդաբեր** (էջ 78), **մաքրակեաց** (էջ 288), **ստապաճոյճ** (էջ 237), **սքանչելակերտեմ** (էջ 52), **քաղցրառուսոյց** (էջ 71) և այլն: Թվարկվածներից միայն մեկ դեպքում է, որ բայարմատի դիմաց բառը բաղադրված է բայաձևով՝ **սքանչելակերտեմ**, որպիսով էլ վերջին հաշվով մտնում է տվյալ կաղապարով կազմվածների մեջ:

ը) Կան նաև սակավաթիվ օրինակներ ներկայացնող բարդ բառեր, որոնք բաղադրված են թվական - գոյական, մակբայ - գոյական կամ բայարմատ, բայարմատ կամ բայ - գոյական, այլև դերանուն - ածական բաղադրիչներով: Դրանք բերում ենք ստորև՝ առանց հաշվի առնելու դրանցում բաղադրվող հիմքերի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ լինելը, գործածության առավել կամ պակաս հաճախականությունն ունենալը և այլն: Օրինակ՝ **եռամիտ** արգայիս և ռաղամիս թուղթն գիտ ցուցական (էջ 132): Որ ելանէ ի հարաւակոյս ի ներքոյ դրանէն յորոյ վերայ շինեաց և ջրաղաց մի **բազմաօգուտ**, որ ոչ երբէք խափանի (էջ 24): Պարտէին բառնալ զանհիմն, **զհետնաբոյս** և **զպատահանիստ** կաթողիկոսութիւնսն իւրեանց (էջ 54): Եւ վասն այլոց կաթողիկոսաց և պատրիարգաց և առաջնորդաց և **որպիսածանոյց** հանգամանքն (էջ 51) և այլն:

Այս կետում բերենք նաև հետևյալ բարդ բառերը. **երկատուն** (էջ 35), **բազմակնիք** (էջ 59), **յետնաշէն** (էջ 194), **զարհուրատես** (էջ 159), **վարելահող** (էջ 189), **ինքնընծայ** (էջ 80), **իւրահաճոյ** (էջ 271), **սոյնահամար** (էջ 259), **սոյնանման** (էջ 135) և այլն:

թ) Թեև քիչ, սակայն հանդիպում են նաև բարդ կազմությամբ բաղադրվող հիմքով, վերջնականում, այսպես կոչված, կրկնաբարդ բառեր: Օրինակ՝ Այլև ունի ի սոյն գեօղս **զկիսաձիթահանք** մի, զոր սոյն գեօղացի Վարաքի որդի Սիմէօնն ծախէ երկու թումանի (էջ 274): Եւ մինչ **զտպագրատունն** ևս հաստատեաց Աստուծով (էջ 44) և այլն: Բերված օրինակներից առաջինում բաղադրվող հիմք է **ձիթահանք**, իսկ երկրորդում՝ **տպագիր** (< **տպագրեմ**) բարդ կազմությամբ ձևը:

2) Բարդ ածանցավոր բառերը նույնպես որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն բառակազմական կաղապարների տարբերության, այլև առհասարակ բաղադրող և բաղադրվող հիմքերի ձևավորման առանձնահատկությունների տեսակետից: Ունենք նման կազմությամբ այնպիսի «նորություն» հանդիսացող բառեր, որոնք բաղադրված են տարբեր կարգի վերջածանցներով, ընդ որում ուրույն խումբ են – **ուրիւն** վերջածանցով բառերը՝ անկախ բաղադրվող հիմքի հոդակապով կամ առանց հոդակապի կազմություն լինելու հանգամանքից:

Ըստ այդմ ունենք հետևյալ ենթախմբերը:

ա) Բարդ ածանցավոր բառեր, որոնց բաղադրվող հիմքն անհոդակապ կազմություն է, որն էլ ենթարկվում է ածանցման – **ուրիւն** ածանցի միջոցով: Օրինակ՝ Զորմէ բացասողն պարտի նախապէս **զհայկազնէութենէն** և զքրիստոսական հաւատոյն իւրմէ բացատրել (էջ 51): Որոյ բարեբարութիւնքն, **օգտաբարութիւնքն** և աբիւնախառն քրտամբք աշխատութիւնքն յոլովք և անգրելիք են (էջ 2) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ կազմությունները. **երկճողութիւն** (էջ 80), **ժողովա-**

բարություն (էջ 83), **լուսարարություն** (էջ 211) և այլն:

բ) Բարդ ածանցավոր բառեր, որոնց բաղադրվող հիմքն ինքնին հոդակապով (գերազանցապես **ա** հոդակապով) բարդություն է, և վերջինս ենթարկվում է ածանցման դարձյալ – **ութին** ածանցի միջոցով: Օրինակ՝ Որպես յիշեցաք ի վերդ ի **յառաջաբանութեան** սոյն գլխոյս (էջ 246): Բանալով զյառաջն մեծաւ աշխատութեամբ և **դրամածախութեամբ** (էջ 23) և այլն:

Այդպես ունենք նաև հետևյալ բարդ ածանցավոր բառերը. **անընդդիմաճառություն** (էջ 51), **դրամատություն** (էջ 253), **թղթագրություն** (էջ 58), **թղթաշինություն** (էջ 44), **զիարդություն** (էջ 91), **կանոնապահություն** (էջ 98), **կնքադրություն** (էջ 59), **հաշուատություն** (էջ 139), **տանջանակրություն** (էջ 64) և այլն:

գ) Այստեղ մեկ առանձին խմբով ներկայացնում ենք այն բարդ ածանցավոր բառերը, որոնց բաղադրվող՝ բարդ կազմությամբ հիմքը բաղադրվում է տարբեր կարգի վերջածանցներով (նաև նախածանցով), ընդ որում բաղադրվող (բարդ կազմությամբ) հիմքն իր հերթին կարող է կազմված լինել որևէ հոդակապով կամ առանց հոդակապի: Օրինակ՝ Եւ որպէս թէ՛ ի զանազանից գեղեցկագունից և **յանուշահոտութեանց** ծաղկանց փնջեալ և եղեալ ի տուփս յայս (էջ 4): Որք յիշեցեալք են ի գրքոջս ի հարկաւորութեանն տեղոջ՝ աստ ևս **առնշանագրին** կարճառոտաբար (էջ 210) և այլն:

Ըստ այդմ ունենք նաև հետևյալ բարդ ածանցավոր բառերը. **երկփեռեկտումն** (էջ 88), **կարճառոտապէս** (էջ 51), **հոգեբաժնական** (էջ 44), **քառաչեա** (էջ 39-40) և այլն:

3) «Զամբո» երկը լեզվի, հատկապես բառապաշարի բազմաշերտության, տերմինային բազմազանության, բառային նորակազմության և գործածության անմիակերպության, տարբերման տեսակետից խստորեն տարբերվում է ժամանակի գրական մի շարք հուշարձաններից, և դա մեծապես պայմանավորված է նրա բովանդակությամբ: Հեղինակը, խորապես տիրապետելով հայերենի ողջ բառապաշարին, վերջինիս բառակազմությանն ու (ի մասնավորի) տերմինակազմությանը, այնուամենայնիվ ըստ հարկի և անհրաժեշտության գործածել է մի շարք օտար բառեր, տերմիններ ու տերմինային անվանումներ (հմմտ. **արգայ, խարճ, դաբալայ, մուլք, ռադամ, մադաֆ** և այլն): Դրանցից բացի հարկ է եղել նաև կազմելու այնպիսի նոր բառեր, որոնց բաղադրական հիմքերից մեկը կամ մյուսը (երբեմն՝ երկուսն էլ) օտար բառ է կամ տերմին: Ըստ այդմ հայերենի նոր բառապաշարում ունենում ենք օտար և բնիկ բաղադրիչներով կազմություններ: Օրինակ՝ Այլ և շինեաց գերիս ծովակս ևս, զմին ի վեր կոյս հանդէպ Մոլա-Տուրսուն գեղջն՝ մեծ և **բազմախարճ**, զերկրորդն ի յարևելակոյս Ղոթի այգի կոչեցելոյ (էջ 24): Եկեալ բնակեալ էին ի ներքոյ Խորվիրապայ սրբոյ վանիցն **ի բաղչատեղն** նորին (էջ 37): Եւ երկոցունցն ևս դաբալայի պէս **գրանամայ** տան, թէ... (էջ 74) և այլն:

Այդպես ունենք նաև հետևյալ բարդ բառերը. **եղաքակիր** (էջ 62), **եօնջատեղ** (էջ 170), **դապալայանման** (էջ 127), **մլքախարճ** (էջ 130), **մլքատէր** (էջ 159), **մլքատու** (էջ 3), **մլքատություն** (էջ 128), **չափաջուր** (էջ 196), **չորխատուն** (էջ 191), **սէլաֆատեղ** (էջ 278), **վախմաստություն** (էջ 253), **տաճկաբնակ** (էջ 278) և այլն:

4) Միմեոն Կաթողիկոս Երևանցու սույն աշխատության մեջ բավականին շատ են հանդիպում ածանցավոր կազմությամբ նոր բառերը, որոնք բաղադրված են թե՛

հայերեն և թե՛ օտար լեզուներից փոխառյալ բառերի՝ իբրև բաղադրվող հիմքերի հետ (հմմտ. **հեղինակություն, վեքիություն** և այլն):

Նորակազմ ածանցավոր բառերը տվյալ դեպքում ուշադրության առկա են ոչ միայն այս կամ այն ածանցով (նախածանց կամ վերջածանց) բաղադրվելու, վերջիններիս գործածության հաճախականության, բաղադրվող հիմքի (արմատ կամ արմատական բառ) հնարավոր հնչյունափոխության տեսակետից, այլև մեկ և մեկից ավելի ածանցների մասնակցության առումով և այլն: Եվ նկատի ունենալով հիշյալ հանգամանքները՝ ստորև առանձին խմբերով ներկայացնում ենք «Ջամբո» երկում գործածված այն ածանցավոր բառերը, որոնք հարաբերական իմաստով կարող են նորաբանություն համարվել, այսինքն՝ չենք գտնում հատկապես գրաբարի ամենաընդարձակ և հայտնի բառարաններում:

ա) Միածանց բառեր, որոնք բաղադրված են – **ուրին** ածանցով: Օրինակ՝ **հեղինակություն** (էջ 91), **միրաբություն** (< **միր** – **աբ**) (էջ 193), **վեքիություն** (էջ 173), **քննություն** (< **ի քննություն մտանել**) (էջ 82) և այլն:

բ) Երկածանց բառեր, որոնք ևս բաղադրված են – **ուրին** ածանցով: Օրինակ՝ **նուիրակություն** (էջ 94), **շահաւտություն** (էջ 233), **չհասություն** (էջ 241), **պատշաճաւորություն** (էջ 42), **վտանգաւորություն** (էջ 167), **վերահաստատություն** (էջ 219), **վերանորոգություն** (էջ 2) և այլն:

Բերվածներից **նուիրակ** և **չհաս** բաղադրվող հիմքերը, իբրև ածանցական կազմություններ, ինչ-ինչ առանձնահատկություններով տարբեր են, քան մյուս բաղադրություններում երևան եկածները:

գ) Միածանց կազմություն է նաև – **ուտ** ածանցով բաղադրված **ծառուտ** բառը. Դարձեալ ունի սուրբ Աթոռս յայս գեօղս մերձ իւրեան զերկուս **ծառուտ** պարտեզս (էջ 169):

դ) Բառեր, որոնք բաղադրված են – **ակաւն** ածանցով՝ կերտելով ածականներ, ընդ որում անհնչյունափոխ կամ հնչյունափոխված բաղադրվող հիմքով: Օրինակ՝ Յորոց առնու... զնուիրակաւան, **զգանձանակակաւան**, զհոգեբաժնակաւան, զկտակակաւան արդիւնս (էջ 44): Ժողովուրդ տեղոյն զգուեցեալք ի **դժնէակաւան** բարուցն նորին, գրեն բողոք առ Ղազար Կաթողիկոսն (էջ 49): Վկայական և **վիճունակաւան** գրովքն իւրեանց, և թէ ե՞րբ և որո՞յ ձեռօքն (էջ 3) և այլն:

Ըստ այդմ ունենք նաև հետևյալ բառերը. **արտաքսական** (էջ 34), **զանգատական** (էջ 81), **երբեմնական** (էջ 63), **մարմնաւորական** (էջ 100), **նեռնական** (էջ 82), **ներքսական** (էջ 34) և այլն:

ե) Բառեր, որոնք բաղադրված են – **ապէս** ածանցով՝ հիմնականում անհնչյունափոխ հիմքերով, կազմելով մակբայ: Օրինակ՝ Յորոց յուսամ յիշել **երբեմնապէս** միով Ողորմեայի ի յառիլն ի յայս փորձարան (էջ 152): Զոր գրէ ըստ խնդրոյ Մինաս Կաթողիկոսին զմաղաֆութիւնն Սրբոյ Աթոռոյս, վերահաստատելով **լաւապէս** ըստ ամենայնի (էջ 226): Յորում ցուցանին ռաղամք թագաւորաց Պարսից և բուռն իշխողաց **շահապիսեաց** և այլոց (էջ 209) և այլն:

Այս ձևով կազմված ունենք նաև հետևյալ բառերը. **արգայապէս** (էջ 59), **արտաքսապէս** (էջ 3), **բացապէս** (էջ 138), **երկորդապէս** (էջ 17), **կրկնապէս** (էջ 34), **հաստատնապէս** (էջ 54, այլև 198), **հրամայապէս** (էջ 59), **ձրիապէս** (էջ 118), **յաւիտենա-**

կանապես (էջ 44), **ներքսապես** (էջ 3), **ցանկապես** (էջ 210) և այլն:

զ) Բառեր, որոնք բաղադրված են - **աբար**, - **ային**, - **ապան**, - **արան**, - **ացի**, - **ա-ցու**, - **աուր**, - **աւէտ** ածանցներով. քանի որ ածանցման տեսակետից բերված ածանցներն առհասարակ հայերենում պակաս արտադրողական են, քան մյուսները, ուստի այստեղ նույնպես ունենք համեմատաբար քիչ թվով նորակազմ բառեր: Օրինակ՝ Որպես հետևեցան **էջմիածնայինքս** նոցա (էջ 54): Որ էր յայն **կուսացի** (իմա՝ **կոյս** «կողմ՝ տեղ» - Վ. Հ.), և մանաւանդ ի վիճակէն Ստյ (էջ 235): Որոյ կողմունքն են շէն **այգաւոր** և **բաղչայաւոր** տունք (էջ 274) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ բառերը. **որպիսաբար** (էջ 130), **աթոռայինք(ք)** (էջ 128), **ձիթապան** (էջ 167), **փորձարան** (էջ 152), **կաթողիկոսացու** (էջ 79), **ապօրինաւոր** (էջ 81), **հնձանաւոր** (էջ 254), **մլաւոր** (էջ 189), **չկարգաւոր(ք)** (փոխ.՝ **չկարգաւոր(ք)**) (էջ 41-42), **ջրաւէտ** (էջ 160) և այլն:

է) Բառեր, որոնք բաղադրված են - **եղ**, - **եղէն**, - **որակ**, - **որդ**, - **օրէն** ածանցներով. ունենք մեկ-երկու օրինակ՝ ամեն մի ածանցով կազմված: Օրինակ՝ Սա էր այր հեզաբարոյ և հոգելի, շնորհաշատ և գեղեցկատես, ջերմեռանդ և **արտասուեղ** (էջ 27): Այլ ի ձեռն միոյ սևագլխոյ սակաւ ինչ **քաղցրեղէնօք** և գառամբ շնորհաւորէր (էջ 151) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ բառերը. **վեճեղէն** (էջ 44), **փոստրակ** (էջ 195), **հնգորդ** («մի տեսակ հարկ՝ տուրք») (էջ 130), **յաճախօրէն** (էջ 65), **որոշակօրէն** (էջ 138) և այլն:

ը) Ի տարբերություն նախորդ խմբերում բերված ածանցավոր բառերի, որոնք բաղադրված էին նախաձանցներով, ստորև անդրադառնալու ենք այն ածանցավոր բառերին, որոնք կազմված են նախաձանցներով: Ընդ որում դրանք բաղադրված են նախաձանց - գոյական (կամ այլ խոսքի մասի պատկանող միավոր), այլև նախաձանց - բայ (կամ բայարմատ) բաղադրիչներով:

Առաջին կաղապարով կազմված ենք գտնում բավականին քիչ թվով բառեր՝ բաղադրված **ան** -, **չ** - նախաձանցներով: Օրինակ՝ Գտանեցեալ ընդ իշխանութեամբ անիշխան տէրանց խստասրտոց և գազանաբարոյից յափշտակողաց, և ինքն անգոր և **անսուր** (էջ 2): Եւ տայ ձեռնադրել զպիղծն Բակուր ի **չկաթողիկոս** Աղուանից (էջ 69) և այլն: Այսպես ունենք նաև **անթագուցանելի** (էջ 2), **անկարգանալ** (էջ 57), **անկաթողիկոս** (էջ 76), **անպակաս** (էջ 168) բառերը:

Երկրորդ կաղապարով կազմված բառերի դեպքում հիմնականում հանդես են եկել **ներ** -, **վերա** -, երբեմն՝ **հակա** -, **նախ** - ածանցները: Օրինակ՝ Յետոյ ի **ներհակել** Ջուղայեցոյ ընդ Նահապետ Կաթողիկոսին (էջ 186): Մի որ **ներհակիցի**, զի հարկատու են մեզ (էջ 212): Եւ շահն ևս **վերայիշելով** յատուկ յատուկ գեղեալ խնդիրսն (էջ 133) և այլն:

Այդպես ունենք նաև հետևյալ ածանցավոր բառերը. **հակամարտիմ** (էջ 8), **նախաւանդ** (էջ 87), **ներհականիստ** (էջ 67), **վերակրկնել** (էջ 91), **վերայաւելել** (փոխ.՝ **վերայաւելույ**) (էջ 100), **վերառուղիել** (էջ 68) և այլն:

թ) Բառեր, որոնք բաղադրվող հիմքն ածանցավոր բառ է, որի հիման վրա էլ կազմվում են բայեր: Օրինակ՝ Որ է խորացեալ և **ծովակացեալ** տեղի մի ի մէջ գետոյս մերոյ (էջ 163): Ուրեմն **կարճառօտելով** զայսմանէ, եկեցուք ի մեր յառաջադ-

րութիւն (էջ 10): Աղէքսանդր Կաթողիկոսն Ջուղայեցի **ի մտաւորելն** յառնուլ զայս այգիս (էջ 166) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ ածանցավոր բառերը. **կանօնաւորել** (էջ 142), **տնաւորել** (էջ 186) և այլն:

Ժ) «Ջամբո» երկում նույնպէս գործածված ենք գտնում այնպիսի բառեր, որոնք բաղադրված են մեկից ավելի ածանցներով, ընդ որում ոչ թե միաժամանակ, այլ հետզհետե, աստիճանաբար: Նշենք, որ հայերենի բառակազմությանն առհասարակ անհարիր է համաձանցավոր բառերի կազմությունը միաժամանակյա բաղադրությամբ՝ ի տարբերություն ուրիշ լեզուների: Այդուհանդերձ, մենք նման կազմություններն ավանում ենք համաձանցավոր բառեր, այսինքն՝ բառեր, որոնց արդյունքում ունենք և՛ նախածանց, և՛ վերջածանց (առնվազն մեկական ածանց): Օրինակ՝ Եւ խնդրէ, զի և ինքն տայցէ զռադամ մի **ի վերահաստատութեան** նոցա (էջ 133):

Այսպէս ունենք հետևյալ համաձանցավոր բառերը. **անարգելօրէն** (էջ 57), **ապօրինաւորութիւն** (էջ 81), **հաւահաւանել** (էջ 59), **համահաւանութիւն** (էջ 59) և այլն:

5. Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Ջամբո» աշխատությունը, ինչպէս տեսնում ենք սույն համառոտ վերլուծությունից, աչքի է ընկնում ի թիվս այլ երևույթների նաև բառապաշարի հարստությամբ: Վերջինս ուշադրության առարկա կարող է դառնալ ոչ միայն նորակազմ բառերի և տերմինների բառակազմական քննության տեսակետից, այլև իմաստաբանության առումով: Ավելին, այդ երկի բառապաշարի նորաբանությունը յուրօրինակ փաստ է այն մասին, որ հայոց լեզվի զարգացումը նոր ժամանակներում շարունակվում էր առաջ գնալ՝ անկախ զարգացման նպաստավոր պայմանների ոչ այնքան նշողված լինելուց:

Թե՛ վաղ անցյալի և թե՛ նոր ժամանակների հայերեն գրական հուշարձանները լավագույն վկայությունն են մեր մտավոր առաջընթացի: Դրանցում ամբարված են ժամանակի մտածողությանը վերաբերող բառեր և այլ կարգի անվանումներ, որոնց մանրագնին ուսումնասիրությունն այսօր ավելի քան անհրաժեշտ է՝ անցյալին իրազեկ լինելու, ընդ որում հայոց լեզվի պատմությանը խորությամբ տեղեկանալու նպատակով:

Այս տեսակետից Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Ջամբո» աշխատությունն անշրջանցելի և անզերագնահատելի երևույթ է: